

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/1

4 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 09.01.2013թ-ի նիստում քննության է առնվել «Արսեն և Ներսես» ՍՊԸ 17.12.2012թ. դիմումով բերված գանգատը « ԿԱ ՊԵԿ Սիսիանի ՏՀՏ 21.11.2012թ. թիվ 1002810 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 22.08.2012թ. թիվ 1002810 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Արսեն և Ներսես» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող « օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 21.11.2012թ-ին կազմվել է թիվ 1002810 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 12.126.281 դրամ, ինչպես նաև 4.403.172 դրամ պակասեցվող ԱԱՀ-ի գումար:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ստուգմամբ պարզվեց, որ 2011թ. 2-րդ եռամսյակում « ԿԱ ՊԵԿ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց հաշվարկված 7905274 դրամ ԱԱՀ-ի գումարից ենթակա է դեբետագրման 4374753 դրամը, հետաձգման՝ 3530521 դրամ: Նախորդ ժամանակաշրջանից հետաձգված գումարներ չկան: Արդյունքում 2011թ. 2-րդ եռամսյակում հաշվանցման ենթակա դեբետը կկազմի 1796594 դրամ, սակայն ընկերությունը ներկայացրել է դեբետ 4074389 դրամ, կամ ավել հաշվանցում է կատարել 2270795 դրամ:

Ընկերությունը 2011թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում Սիսիանի ՏՀՏ ներկայացրած տեղեկանքում չէր ներառել համապատասխանաբար 3756881 դրամի և 646291 դրամի տեղեկություններ, այդ տեղեկությունները ներառվել են ճշտված հաշվետվության մեջ:

Ինախտվել է «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 20-րդ հոդվածի և « Կառավարության թիվ 937-Ն որոշման 14-րդ կետի պահանջները, այն է՝ սահմանված կարգով և ժամկետում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար տեղեկանք չներկայացվելու դեպքերում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները համարվում են ԱԱՀ վճարողի կողմից չներկայացված: Այդ հաշվետու ժամանակաշրջանին դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հետագա որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում: Արդյունքում կատարվել է ավել հաշվանցում համապատասխանաբար 3756881 դրամի և 646291 դրամի չափով:

Ընկերության կողմից բազմակի օգտագործված տարանների գծով ավել ԱԱՀ է հաշվանցվել 2012թ. հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսներին ընդամենը 1410220 դրամ: Ինախտվել է «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով նշված խախտումների հետևանքով ստուգվող ժամանակաշրջանում ավել հաշվանցում է կատարվել 8084187 դրամ:

Հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» « օրենքի 43-րդ հոդվածի դրույթները ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 12.126.281 դրամ, ինչպես նաև 4.403.172 դրամ հետ վերադարձման ԱԱՀ:

<Արսեն և Ներսես> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

1. Ստուգման ակտով 2011թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվանցման վերաբերյալ արձանագրվել է, որ նախորդ հաշվետու ժամանակաշրջաններից հետաձգված ԱԱՀ-ից հաշվանցվել է 4049000 դրամ, որը չի ընդունվում, քանի որ նախորդ՝ 2011թ. 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվետվության մեջ հետաձգված գումար չի եղել: Փաստացի առ 01.04.2011թ. ԱԱՀ-ի հետաձգված գումարը կազմել է 2166451 դրամ, որը սակայն նախորդ ստուգմամբ (ստուգման ժամանակաշրջանը ընդգրկել է մինչև 01.04.2011թ.) չի արձանագրվել, իսկ նոր ստուգմամբ այդ փաստն անտեսվում է: Հնարավոր չէր նաև հաշվետվությունները ճշգրտել:

Ելնելով վերոհիշյալից առարկում ենք որպես խախտում արձանագրված 4049000 դրամ գումարին և ընդունում ենք միայն 1882549 դրամը (4049000-2166451-1882549):

2. Ստուգման ակտով արձանագրվել է, որ << տարածքում իրացված արտադրանքի մաս կազմող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարային բաժին ընկնող ԱԱՀ-ն սխալմամբ է հաշվանցվել, որի խախտման գումարը կազմում է 1410220 դրամ: Արձանագրված խախտումը չենք ընդունում այն պատճառաբանությամբ, որ մեր կողմից օգտագործվող լինոնադի և հանքային ջրի շտերը շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա չեն հանդիսանում: Շտերը, համարյա ամբողջությամբ ձեռք ենք բերում <Մարանիստ> ՍՊԸ-ից, որը հանդիսանում է անմիջական արտադրող: Նշենք նաև, որ օգտագործված շտեր, փոքր քանակությամբ, գնում ենք տարբեր տնտեսվարող սուբյեկտներից՝ օրինական փաստաթղթերով: Արտադրանքի իրացման ժամանակ մեր կողմից դուրս գրված բոլոր հարկային հաշիվներում շտերի արժեքը, որպես արտադրանքի գնագոյացման անբաժանելի տարր, ներառված է արտադրանքի գնի մեջ (բնականաբար, ԱԱՀ-ն էլ հաշվարկվում է ամբողջական գնից ելնելով), և շտերը առանձին չեն դիտարկվում որպես վերադարձվող տարա և հարկային հաշվի գումարից չեն հանվում:

Ելնելով նշված հանգամանքներից գտնում ենք, որ օգտագործվող շտերը շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա չեն հանդիսանում: Հետևապես այդ մասով արձանագրված խախտման գումարը՝ 1410220 դրամ, ամբողջությամբ առարկվում է:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգառը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ընկերությունը զբաղվում է հանքային ջրի շտայնամբ և լինոնադի արտադրությամբ: Արտադրանքի մի մասն իրացվում է << տարածքում, իսկ մյուս մասը արտահանվում:

Ընկերության գանգատի 1-ին կետում բերված փաստարկների վերաբերյալ նշվեց, որ Ընկերությունը 2011թ. 2-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվետվության մեջ օգտագործել է /դեբետագրել/ նախորդ ժամանակաշրջաններում հետաձգված ԱԱՀ-ն՝ գումարով 4049483 դրամ: Սակայն, ընկերության կողմից 01.04.2011 թ-ին Միսիանի ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվետվություններով հետաձգումներ է կատարվել 2009 թ-ի 1-ին եռամսյակում 61.7 հազ. դրամ և 2010թ. 1-ին եռամսյակում 694.1 հազ. դրամ: Նշված հետաձգված ԱԱՀ-ի գումարները հաշվառվել են ընկերությունում 2010թ-ին կատարված բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման արդյունքում կազմված ակտով: Հետևաբար ընկերությունը չունենալով նախորդ ժամանակաշրջաններում հետաձգված ԱԱՀ-ի գումարներ չէր կարող օգտագործել 2011թ-ի 2-րդ եռամսյակում:

Ընկերության գանգատի 2-րդ կետում բերված փաստարկների վերաբերյալ նշվեց, որ ընկերությունն արտադրության համար օգտագործվող ապակյա տարանների /շտերի/ մի մասը ձեռք է բերում <Մարանիստ> ՍՊԸ-ից: Արտադրության համար անհրաժեշտ ապակյա տարանների մյուս մասը լրացվում է << տարածքում տարբեր կազմակերպություններին վաճառված արտադրանքի՝ զովացուցիչ ըմպելիքների շտերը հետ գնելու միջոցով: Ընդ որում, նշված կազմակերպությունները չեն հանդիսանում անմիջապես շիջ արտադրող կամ ներմուծող: Այսինքն, հետ գնված շտերն ընկերության կողմից կրկին օգտագործվում են նոր արտադրանքներ արտադրելու նպատակով: Որպես ապացույց ստուգումն իրականացրած

անձանց կողմից ներկայացվեցին ընկերության կողմից <Յոթնյակ> ՍՊԸ-ից (ոեստորան-հացատուն) ձեռք բերված ապակյա շշերի վերաբերյալ հաշիվ-ապրանքագրերը:

Վերոգրյալից հետևում է, որ հետ գնված և արտադրությունում օգտագործվող շշերը հանդիսանում են որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարաներ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԱՂԱՍԵՂՅԱՆ